

Կ Ա Ր Գ

«Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի անցկացման

«Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթն անցկացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

Մրցույթի նպատակն է բացահայտել երեխաների կյանքի և առողջության պահպանման, նրանց ներդաշնակ ու համակողմանի զարգացման ուղղությամբ ուսումնադաստիարակչական աշխատանքում մեթոդական, գործնական խորը պատրաստվածություն ցուցաբերած, հմուտ, ստեղծագործական աշխատանք կատարող դաստիարակներին, ընդհանրացնել նրանց մանկավարժական և մասնագիտական առաջավոր փորձը, նպաստել հասարակության մեջ դաստիարակ-մանկավարժի հեղինակության բարձրացմանը:

1. Մրցույթն անց է կացվում 2 փուլով՝ շրջանային /քաղաքային/ և հանրապետական: Մրցույթի յուրաքանչյուր փուլ նախապատրաստելու և անցկացնելու համար ստեղծվում են շրջանային /քաղաքային/ և հանրապետական գնահատող հանձնաժողովներ:

Մրցույթի շրջանային /քաղաքային/ փուլի մասնակիցների թեկնածությունները ներկայացնում են նախադպրոցական հաստատությունների տնօրենները՝ մանկավարժական խորհուրդների որոշմամբ:

Յուրաքանչյուր մասնակից գնահատող հանձնաժողովին է ներկայացնում հաստատության մանկավարժական խորհրդի կողմից տրված երաշխավորագիր-բնութագիր, որտեղ նշվում է.

- դաստիարակի /երաժշտական ղեկավարի/ կրթությունը,
- մասնագիտությունը,
- ավարտած ուսումնական հաստատությունը,
- մանկավարժական աշխատանքի ստաժը,
- կոչումները /երբ է ստացել, ում կողմից/,
- տվյալ ուստարում որ խմբում է աշխատում,
- մասնագիտական և կազմակերպչական կարողությունները և այլն:

Անհրաժեշտ է ներկայացնել նաև.

- իրկողմից անցկացրած որևէ պարապմունքի, խաղի, աշխատանքի նկարագրությունը
- կազմակերպած միջոցառումների համառոտ նկարագրությունը
- հրատարակած հոդվածների և գիտաժողովներում ունեցած ելույթների պատճենները:

2. Մրցույթի շրջանային /քաղաքային/ փուլն ընդգրկում է.

բաց պարապմունքի, ռեժիմային պահի, գործունեության տարբեր ձևերի, զվարճալիքների կազմակերպում /կրթական համալիր ծրագրով նախատեսված թեման ընտրում է մարզային գնահատող հանձնաժողովը/:

Շրջանային /քաղաքային/ հանձնաժողովների անդամների թեկնածությունն առաջադրում է շրջվարչակազմի /քաղաքապետարանի/ կրթության վարչությունը, հաստատում է շրջվարչակազմի ղեկավարը /քաղաքապետը/:

Շրջանային /քաղաքային/ հանձնաժողովների կազմում ընդգրկվում են շրջվարչակազմի /քաղաքապետարանի/ կրթության բաժնի մասնագետներ, տարածքը սպասարկող մանկավարժներ, նախադպրոցական հաստատությունների տնօրեններ, մեթոդիստներ:

Մրցույթի շրջանային /քաղաքային/ փուլի արդյունքները ամփոփվում են մինչև մարտի 1-ը: Մրցույթի առաջին փուլի արդյունքում ընտրվում է շրջանի /քաղաքի/ «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի հաղթողը:

Շրջանային /քաղաքային/ գնահատող հանձնաժողովները մինչև մարտի 15-ը հանրապետական հանձնաժողովին են ներկայացնում շրջանային /քաղաքային/ փուլում հաղթող ճանաչված դաստիարակների փաստաթղթերը:

3. Շրջանային /քաղաքային/ փուլի հաղթողները /յուրաքանչյուր շրջանից 1 և Ստեփանակերտ քաղաքից 1 դաստիարակ/ մասնակցում են մրցույթի հանրապետական փուլին:

Հանրապետական հանձնաժողովի կազմը առաջադրում է ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կրթության և գիտության վարչությունը, հաստատում է նախարարը:

Հանրապետական հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ԼՂՀ կրթության և գիտության նախարարը, փոխնախարարը, նախարարության մասնագետներ, շրջվարչակազմերի /քաղաքապետարանի/ աշխատակիցներ, հաստատությունների տնօրեններ գիտության և մշակույթի անվանի գործիչներ, հասարակական կազմակերպությունների ու զանգվածային լրատվության մարմինների ներկայացուցիչներ:

Մրցույթի հանրապետական փուլն ընդգրկում է.

-կլոր սեղան-բանավեճ՝ գնահատող հանձնաժողովի կողմից առաջադրված թեմայի շուրջ,
- առաջարկություններ ուսումնադաստիարակչական գործունեության կատարելագործման ուղղությամբ:

«Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի հանրապետական փուլի մասնակիցները պարգևատրվում են նախարարության պատվոգրերով, իսկ հաղթողը՝ արժանանում է նաև դրամական խրախուսանքին:

Մրցույթի հանրապետական փուլի մասնակիցները կարող են գնահատվել նաև ըստ հետևյալ անվանակարգերի.

«Նորարարությունը մանկավարժության մեջ»

«Սիրտս նվիրում եմ երեխաներին»

«Երեխաների կյանքը հետաքրքիր անակնկալներով հագեցնելու համար»

4. Մրցույթի հանրապետական փուլի արդյունքները ամփոփվում են մինչև հունիսի 30-ը:
5. Մրցույթի հանրապետական փուլի մասնակից բոլոր դաստիարակները պարգևատրվում են ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝ «Ուսուցչի օրվա» նախօրյակին:
6. «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի արդյունքները լուսաբանվում են Լուսարար պաշտոնաթերթում:

Կրթության և գիտության վարչություն

Ց Ա Ն Կ

«Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի մոտավոր ուղղությունների

1. Նոր նյութի հաղորդման եւ ամրապնդման ձեւերն ու մեթոդները:
2. Երեխաների տրամաբանական մտածողության, ճանաչողական ակտիվության եւ ինքնուրույնության ապահովումը դասին:
3. Դաստիարակ-ժնող կապի ապահովումը:
4. Դաստիարակի դերը սովորողների հետաքրքրությունների եւ նախասիրությունների վերհանման եւ զարգացման գործում:
5. Դաստիարակի վարպետությունը ուսուցման պրոցեսը հետաքրքիր դարձնելու գործում:

Ց Ա Ն Կ

«Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի շրջանային / քաղաքային/ եւ հանրապետական փուլերին ներկայացվող փաստաթղթերի

1. Հաստատության մանկավարժական խորհրդի կողմից տրված երաշխավորագիր-բնութագիր /վավերացված տնօրենի կողմից/ կից համապատասխան փաստաթղթերով,
2. ուսումնական հաստատության լրիվ անվանումը,
3. դաստիարակի կրթությունը, անկետային տվյալները /ծննդյան թիվը, ստաժը, ծանրաբեռնվածությունը/,
4. մասնագիտությունը,
5. ավարտած ուսումնական հաստատությունը,
6. մանկավարժական աշխատանքի փորձը,
7. կոչումները, պարգևները /ե՞րբ է ստացել, ու՞մ կողմից/
8. մասնակցությունը և ելույթները համաժողովներում, գիտաժողովներում,
9. մասնագիտական և կազմակերպչական կարողությունները,
10. դաստիարակի կողմից անցկացրած որևէ պարապմունքի նկարագիրը /թեման ընտրում է դաստիարակը/,
11. հրատարակված մանկավարժական հոդվածները /կամ պատճենները/ վերջին 5 տարվա ընթացքում՝ Նախարարության աշխատակազմի բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից հաստատված ամսագրերում /առկայության դեպքում/,
12. հեղինակային աշխատությունները /առկայության դեպքում/, Նախարարության կողմից հաստատված ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնաօժանդակ նյութերի հեղինակ կամ համահեղինակ լինելու հավաստումը
13. դաստիարակի տարեկան աշխատանքային փաթեթը
14. անցկացրած բաց պարապմունքների պլան-սեղմագրերը
15. անցկացրած հանդեսների բեմագրերը, տեսաերիզները
16. տվյալ խմբի համար նախատեսած պետական կրթական չափանիշներին համապատասխան գիտելիքների յուրացումը երեխաների կողմից: